# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2017 թվականի N 4-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2010 թվականի հունիսի 22-ի N 19 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 51-Ա և N 52-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

31 հունվարի 2017 թվականի N 5-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 19 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2016 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2010 թվականի հունիսի 21-ի N 16 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 7-Ա որոշումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ 5 (հինգ) անձից.

1) Մերուժան Ռաֆիկի Պապոյան - Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ,

2) Կարեն Անդրանիկի Սարգսյան – Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

3) Ռուզաննա Մուրադի Սարգսյան – Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

4) Սանամ Մուրադի Սարգսյան - Գետամեջ համայնքի ավագանու անդամ,

5) Էթերինա Սերյոժայի Խուրշուդյան - «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ:

2. Հանձնաժողովի նախագահ սահմանել Մերուժան Ռաֆիկի Պապոյանին:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2010 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 19 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

31 հունվարի 2017 թվականի N 6-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 51-Ա ԵՎ N 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 51-Ա որոշման 1-ին կետում «320000» թիվը փոխարինել «280000» թվով, իսկ «երեք հարյուր քսան հազար» բառերը փոխարինել «երկու հարյուր ութսուն հազար» բառերով:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 52-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Գետամեջ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 31-ի
N 6-Ա որոշման
«Հավելված
Գետամեջ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 19-ի
N 52-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատակիցների քանակը՝ 9
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 280 000 | - | - | 280 000 |
| 2. | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 140 000 | - | - | 140 000 |
| 3. | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 180 000 | - | 10 800 | 190 800 |
| 4. | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 175 000 | - | 10 500 | 185 500 |
| 5. | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 175 000 | | 10 500 | 185 500 |
| 6. | | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 85 000 | - | - | 85 000 |
| 7. | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 75 000 | - | - | 75 000 |
| 8. | | Գործավար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 110 000 | - | - | 110 000 |
| 9. | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 130 000 | - | - | 130 000 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 9 | 1 350 000 | - | 31 800 | 1 381 800 » |